

Դժուար կ'ամուսնանայ, սակայն դիւրաւ զաւակ կը բերէ: Որեւէ տեղէ դիւրաւ ներս կը մտնէ, սակայն դժուար դուրս կ'ելլէ: Իր մէջ ամէն բան, դիւրաւ կը շինուի, սակայն կ'աւրուի դժուար: Կը գրէ դժուար, յաճախ չի ալ գրեր, սակայն կը ստորագրէ դիւրաւ:

Երբ Ատափազարցի մը տեսնեմ, ա՛յն տպաւորութիւնը կ'ունենամ, թէ կատակերգութեան մը ներկայ պիտի ըլլամ: Ու քիչ անգամ յուսախաբ կ'ըլլամ: Ոչ-կատակերգու Ատափազարցին անգամ կեանքի կատակերգութեան ընդարձակ սրահին մէջ այնպիսի տաղանդաւոր հանդիսատես մըն է, որ շատ անգամ բեմի վրայ խաղացողներէն աւելի կը ժպտեցնէ մեզ:

Սուտ չի խօսիր, այլ պոչաւոր ճշմարտութիւններ կ'ըսէ, այսինքն՝ ճշմարտութիւնը կը բազմապատկէ հազարով եւ կամ խոշորացոյցերու տակ կը բռնէ: Կ'ուզէ մեծցնել ճշմարտութեան դիրքը:

Եթէ օդային յարձակման փորձի մը ներկայ ըլլայ, կը յայտարարէ.

-Չորս ժամ տեւող դժոխային ռմբակոծութեան ընթացքին մէկ հոգիի քիթը չարունեցաւ:

Կը մոռնայ, որ մէջտեղը վիրաւոր մը կայ՝ գլուխէն զարնուած, ու անիկա ինքն է:

Եթէ կլլող ձեւանաս, կը շարունակէ ու կ'ըսէ.

-Յիւանդապահուիները սկսան նեղուիլ վիրաւոր չըլլալուն: Անոնց մէջէն *խասս* գեղեցիկ մը իր ձանձրոյթը փարատելու համար սկսաւ մենապար մը դառնալ լուսնին տակ: Ու փոխանակ վիրաւոր դարմանելու՝ իր նայուածքին նետովը վիրաւորեց սիրտս ու թոյլ տուաւ, որ մեր Չարիսն պէս արիւնս վազէ...

Ատափազարցին ունեցած է համբաւաւոր օղետուն մը՝ զայն անուանելով «Մանուին Ծովը»: Թէեւ այս «ծով»ը աշխարհագրութեան չոր ու ցամաք քարտէսներուն մէջ կարելի չէ գտնել, սակայն, այնտեղ ահագին թիւով մարդիկ խեղդուած, հոգիով լոզցած կամ սուզուած են՝ ունայնութեան նաւահանգիստներէն հեռանալու համար: Ատափազարցին Միջերկրականի ծովապետ ալ ընես, ան միշտ կը փնտռէ «Մանուին Ծովը», ուր այնքան առագաստներ մաշեցուցած է: Ինչ պատկերալից է, սակայն, այս «ծով» բառը: Մարդ գինովնալով կը ծախէ քաղաքները, երկիրները ու վերջապէս ամբողջ ցամաքամասը: